

# Հայաստանի Վերանկախացման 14ամեակի Առթիվ Հանդիսություն

21 Սեպտեմբեր 2005  
Երուսաղէմ

Անգամ մը եւս «Մեր Հայրենիք»ը արձագանգեց Նօթրտամի Պանթօկի հսկայական պատշգամի վրայ, ուր հաուաբուած էին աւելի քան երկու հարիւր Հայեր ու տասնեակ մը Հրեայ քաղաքական թէ ակադէմական անձնաւորութիւններ, որոնց կարգին Երուսաղէմի քաղաքապետ Ուրի Լուբլիանսքի թէ Եւրի Ծթէրն անուն խորհրդարանական մը որ ինքզինք կը նկատէ Հայոց ներկայացուցիչը Իսրայէլեան իշխանութեանց մօտ:



Չախն Ակար՝ Քաղաքապետ Լուբլիանսքի եւ Պատույ Հիւպատոս Յ. Մոմճեան:

Աջ Ակար՝ Իսրայէլի խորհրդարանի անդամ Եւրի Ծթէրն խօսքի պահուն:



Նախանցեալ տարիներէ աւելի մեծ շուքով ներկայացաւ Ս. Յակոբեանց միաբանական դասը գլխաւորութեամբ Ամէն. Սրբ. Պատրիարք Հօր, որուն կ'ընկերակցէին Արժանթիներն ժամանած Գիսակ եպս. առաւել Աւստրալահայ առաջնորդ Ադան եպս. Պալիոզեան:

Հրեայ հիւրերու շարքին կ'երեւային նաեւ մեծ Հայասէր Եաիր Օրօնը, Հայոց հարցի պաշտպան նախկին խորհրդարանական ծախակողմեան Եաիր Յապանը ու Հրէական Համալսարանի հայկական ամպիոնի դասախօս ու վարիչ Մայքլ Սթօնը:

Օրուան հիւրընկալը Իսրայէլի մօտ Հայաստանի պատույ Հիւպատոս Տիար Յուլակ Մոմճեան իր խօսքի մէջ իր գնահատականը թէ շնորհակալութիւնը յայտնեց բոլորին նեոարեալ վերել նշուած հիւրերուն, որոնց բարի կամեցողութեամբ կը զարգանայ Հայաստան Իսրայէլ յարաբերութիւնները:



Վսեմաշուք Հիւպատոսէ ետք խօսք առաւ Իսրայէլի Խորհրդարան Գնէսէթի անդամ Եուրի Շթերն ու իր Հայ ժողովուրդի հանդէպ ունեցած համակրական զգացումները արտայայտելէ ետք չմոռցաւ բերելու իր բողոքը հանդէպ Իսրայէլեան Իշխանութեան արտաքին քաղաքականութեան, որը տակաւին անամօթաբար կը խուսափի Հայոց Ցեղասպանութեան փաստը ընդունելու բարոյական պարտաւորութենէ:

Աւելի քան տասնամեակի մը պատմութիւն արձանագրած վերանկախացած Հայաստանի հիմնադրման օրուան առթիւ, Հայոց Հիւպատոսի կողմէ կազմակերպուած այս ընդունելութիւնը դարձած է գաղութը մէկտեղող թէ խանդավորող գեղեցիկ հանդիպում, որուն Ամերկացիք պիտի ըսէին exciting happening, հետաքրքիր հանդիպում, որուն շատ շատեր կ'սպասեն:



*Ս. Յակոբայ միաբանական դասը, գլխավորութեամբ Պատրիարք Հօր, կը ժամանէ:*